ՍԴ3/0114/01/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2022 թվականի հուլիսի 20-ին ք.Երևանում

Ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0114/01/21 քրեական գործի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին դիմելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 14-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2021 թվականի նոյեմբերի 15-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 92164721 (ՍԴ3/0114/01/21) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Դավիթ Մանվելի Սիմոնյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով, և նույն օրը մակագրվել է նույն դատարանի դատավոր Բ.Բախշիյանին:

2022 թվականի մարտի 21-ին թիվ ՍԴ3/0114/01/21 քրեական գործը վերամակագրվել է դատավոր Վ.Ջիվանյանին և 2022 թվականի մարտի 22-ին ընդունվել վարույթ:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հունիսի 17-ին որոշում է կայացրել քրեական գործն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում թիվ ՍԴ3/0114/01/21 քրեական գործը ստացվել է 2022 թվականի հուլիսի 4-ին և հուլիսի 7-ի որոշմամբ ընդունվել դատավոր Հ.Մանուկյանի վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հուլիսի 14-ի որոշմամբ, գործի ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար, դիմել է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին:

4. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հուլիսի 15-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները</u>.

5. Նախաքննության մարմնի՝ 2021 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ Դավիթ Սիմոնյանը ներգրավվել է որպես մեղադրյալ, և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա *«հանդիսանալով ՊԲ 35383 զորամասի 3-րդ հրաձգային գումարտակի ականանետային մարտկոցի 2-րդ ականանետային դասակի 3-րդ ականանետի հաշվարկի համար, պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, հրաժարվել է ՊԲ 35383 զորամասում կատարել զինվորական ծառայության պարտականությունները և ՀՀ տարածքում տեղակայված զորամասերից մեկում հետագա ծառայությունը շարունակելու նպատակով, 2021 թվականի հուլիսի 10-ին, ժամը 06:30-ի սահմաններում, առանց թույլտվության, ինքնակամ թողել է զորամասի տարածքը և 2021 թվականի հուլիսի 12-ին ժամը 10:08-ին ինքնակամ*

ներկայացել է ՀՀ ՊՆ ՌՈ՝ փաստաթղթի դադարեցնելով ՊԲ 35383 զորամասում զինվորական ծառայության պարտականությունների կատարումը»[1]*:*

6. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հունիսի 17-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Սույն քրեական գործի մեղադրական եզրակացությունից դիտվում է, որ Դավիթ Մանվելի Սիմոնյանը նշանակվել է ծառայության ՊԲ 35383 զորամասում և հրաժարվելով կատարել զինվորական ծառայության առանձին պարտականությունները՝ 2021 թվականի հուլիսի 10-ին ժամը 6:30-ի սահմաններում ինքնակամ թողել է ծառայության վայրը՝ ՊԲ 35383 զորամասի տարածքը և 2021 թվականի հուլիսի 12-ին ժամը 10:08-ին ինքնակամ ներկայացել է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն և հայտարարել, որ հրաժարվում է այդ զորամասում, ինչպես նաև պաշտպանության բանակում ծառայությունից և փաստաթղթի չի վերադարձել զորամաս: Այսինքն՝ Դ.Սիմոնյանի ենթադրյալ հանցանքի կատարումն ըստ առաջադրված մեղադրանքի սկսվել է 2021 թվականի հուլիսի 10-ին ժամը 06:30-ին և ավարտվել 2021 թվականի հուլիսի 12-ին ժամը 10:08-ին՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն /ՀՀ քաղաք Երևան, տե՛ս գ.թ. 16/ ինքնակամ ներկայանալով, որպիսի հանգամանքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի իրավակարգավորումների շրջանակում նշանակում է, որ Դ.Սիմոնյանի ենթադրյալ հանցանքի կատարման վայրը հանդիսանում է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքը:*

Այսպիսով, վերը նշված պատճառաբանությամբ գտնում եմ, որ գործն ընդդատյա չէ ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, այլ ընդդատյա է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: (…)»[2]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հուլիսի 14-ի որոշման համաձայն. *«(…) [2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ] քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով*

---

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 56-57:

[2] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 185-188:

նախատեսված հանցակազմի օբյեկտիվ կողմի մի մասը, այն է՝ զինվորական ծառայության հետ կապված պարտականությունների կատարումը դադարեցնելը, ենթադրաբար կատարվել է ՊԲ 35383 զորամասի տարածքում, իսկ օբյեկտիվ կողմի մյուս մասը, այն է՝ զինվորական ծառայության հետ կապված իր պարտականությունների կատարումից հրաժարվելու մասին հայտարարությունը, ենթադրաբար կատարվել է Գյումրի քաղաքում, ՀՀ ՊՆ Ռազմական ոստիկանության Գյումրու բաժանմունքում 2021 թվականի հուլիսի 21-ին բացատրություն տալիս:

Ամփոփելով ասվածը և հաշվի առնելով, որ [2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ] քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման վայր է հանդիսանում այն տարածքը, որտեղ անձը հայտարարել և փաստացի դադարեցրել է զինվորական ծառայության հետ կապված պարտականությունների կատարումը՝ Դատարանը գտնում է, որ Դավիթ Մանվելի Սիմոնյանին առաջադրված մեղադրանքով ենթադրաբար կատարված արարքն ավարտվել է Երևան քաղաքի դատական տարածքից դուրս: (…)»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պարտականությունները կատարողի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

8. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. Դ.Սիմոնյանի վերաբերյալ թիվ ՍԴ3/0114/01/21 քրեական գործն ընդդատյա է Սյունիքի մարզի, թե՞ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

---

[3] Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 203-206:

«Յուրաքանչյուր ոք (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանն *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է, որ. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]*:*

11. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում (…)»:*

1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Գործն ըստ ընդդատության ստացած առաջին ատյանի դատարանը որոշում է կայացնում այն Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա ընդդատությանը:*

(…)

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը գործը Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը (…)»:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* վերաբերյալ գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ,*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված):

(…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[5]*:*

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

---

[5] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, 15-16-րդ կետեր:

Տարածքային ընդդատությունը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածից հետևում է, որ որպես քրեական գործերի դատական տարածքը որոշելու հիմնական կողմնորոշիչ պայման հանդես է գալիս հանցանքի կատարման վայրը:

14. ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Զինվորական ծառայությունից կամ դրա առանձին պարտականությունները կատարելուց զինծառայողի հրաժարվելը, որը զուգորդվել է դրանց չկատարմամբ կամ փաստացի դադարեցմամբ՝ պատժվում է (...)»:*

14.1 ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված հանցակազմի օբյեկտիվ կողմն արտահայտվում է նրանում, որ զինծառայողը բացահայտ, գրավոր, բանավոր, կամ այլ կերպով հայտարարում է այն մասին, որ չի ցանկանում զինվորական ծառայություն անցնել կամ հրաժարվում է զինվորական ծառայության հետ կապված առանձին պարտականությունների կատարումից և փաստացի դադարեցնում է դրանց կատարումը: Այսինքն, նշված հանցակազմն առկա է այն ժամանակ, երբ անձը հայտարարում է զինվորական ծառայության հետ կապված իր պարտականությունների կատարումից հրաժարվելու մասին և փաստացի դադարեցնում է դրանց կատարումը: Հետևաբար, նշված արարքի կատարման վայր հանդես է գալիս այն տարածքը, որտեղ անձը հայտարարել և փաստացի դադարեցրել է զինվորական ծառայությունների կատարումը:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը պաշտպանության իրավունքի՝ որպես անմիջականորեն գործող իրավունքի մեկնաբանման արդյունքում կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ պաշտպանության իրավունքի երաշխավորման նպատակով դատարաններն ամբաստանյալի նկատմամբ գործի քննության ընթացքում չեն կարող դուրս գալ նրան առաջադրված մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքների շրջանակից: Ավելին՝ դատարանը՝ որպես արդարադատություն և ոչ թե քրեական հետապնդում իրականացնող մարմին, սահմանափակված է ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի ծավալով: Այսինքն՝ քրեական գործի քննության ընթացքում դատարանը չի կարող

քննարկման առարկա դարձնել այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք արտացոլված չեն եղել անձին առաջադրված մեղադրանքում[6]:

15. Սույն գործի նյութերի, մասնավորապես՝ Դ.Սիմոնյանին առաջադրված մեղադրանքի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- ժամկետային զինծառայող Դ.Սիմոնյանը, Հայաստանի Հանրապետությունում տեղակայված զորամասում հետագա ծառայությունը շարունակելու նպատակով հրաժարվել է ՊԲ 35383 զորամասում կատարել զինվորական ծառայության պարտականությունները և 2021 թվականի հուլիսի 10-ին՝ ժամը 6:30-ի սահմաններում ինքնակամ թողել է զորամասի տարածքը,

- Դ.Սիմոնյանը 2021 թվականի հուլիսի 12-ին՝ ժամը 10:08-ին ինքնակամ ներկայացել է ՀՀ Պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանություն՝ փաստացի դադարեցնելով ՊԲ 35383 զորամասում զինվորական ծառայության պարտականությունների կատարումը[7]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով 9-14.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված ու մեջբերված իրավական դիրքորոշումների լույսի ներքո պետք է արձանագրել, որ կաշկանդված լինելով գործը բացառապես անձին առաջադրված մեղադրանքի սահմաններում քննելու օրենսդրական պահանջով, սույն գործով Դ.Սիմոնյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպման պայմաններում նրան մեղսագրված ենթադրյալ հանցավոր արարքի կատարման վայր պետք է դիտարկել Դ.Սիմոնյանի՝ ինքնակամ ներկայանալու, այն է՝ ՀՀ Պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության տեղակայման վայրը:

Հետևաբար, մեղադրանքի նման ձևակերպման պայմաններում Դ.Սիմոնյանին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

---

[6] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Կարեն Կունգուրցևի* գործով 2018 թվականի հուլիսի 20-ի թիվ ԼԴ/0141/01/14 որոշումը:
[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

Այսպիսով, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասը, գտնում եմ, որ Դ.Սիմոնյանի վերաբերյալ թիվ ՍԴ3/0114/01/21 քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և համաձայն 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող 483-րդ հոդվածի 22-րդ մասի՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ՍԴ3/0114/01/21 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Դավիթ Մանվելի Սիմոնյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 364-րդ հոդվածի 1-ին մասով, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԱՐԹՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆ